ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԱԳՆ-ԻԿԾՁԲ-12/01

ք. Երևան «12» հունվար 2022թ.

ՀՀ արտաքին գործերի նախարարություն, ի դեմս գլխավոր քարտուղար Բ. Սահակյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Վի Իքս Սոֆթ» ՍՊԸ-ն, ի դեմս գործադիր տնօրեն Վ.Մխիթարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին :

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ներքին ցանցի սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 14832000 (տասնչորս միլիոն ութ հարյուր երեսուներկու հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **12** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի դրությունները տարածվում են կողմերի միջև 2022թ. հունվարի 3-ից ծագած հարաբերությունների վրա

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	«Վի Իքս Սոֆթ» ՍՊԸ
Երևան Վ.Սարգսյան 3	ք. Երևան, Բաղրամյան 24/6
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական	« Ամերիաբանկ » ՓԲԸ
վարչություն	Հ/Հ 1570020836060100
Հ/Հ900011018414	ՀՎՀՀ 02617951
ՀՎՀՀ 02527728	Գործադիր տնօրեն
Գլխավոր քարտուղար	Վ.Մխիթարյան
Բ. Սահակյան	
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՀԱՄԱՐ FOR FINANCIAL TRANSACTIONS 02527728

«ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԱԾ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ "ВИ ИКС СОФТ" LLC "VXSOFT" 02617951

Հավելված N 1
«12» հունվար 2022թ. կնքված
ԱԳՆ-ԻԿԾՁԲ-12/01 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը
1	72261100/3	ՀՀ արտաքին գործերի նախարարության «Էլեկտրոնային հյուպատոսություն» (E-consul) համակարգի տեխնիկական և խորհրդատվական սպասարկման ծառայությունների մատուցման վերաբերյալ: 1.Փաստաթղթի մասին Սույն փաստաթուղթը ներառում է ՀՀ արտաքին գործերի նախարարության «Էլեկտրոնային հյուպատոսություն» համակարգի հիմնական գործառույթները, համակարգի ծրագրային և տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարման նկարագրությունը: Նկարագրված են նաև համակարգի տեխնիկական խնդիրների լուծման և ծրագրային մշակումների ներդրման կարգը: 2.Ներածություն ՀՀ արտաքին գործերի նախարարության «Էլեկտրոնային հյուպատոսություն» համակարգը ծառայում է որպես նախարարության հյուպատոսական վարչության և օտարերկրյա պետություններում գործող ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների կողմից ՀՀ օրենսդրությամբ իրենց վերապահված գործառույթների իրականացման էլեկտրոնային կառավարման գործիքակազմ: «Էլեկտրոնային հյուպատոսություն» համակարգի նոր տարբերակը մշակվել և մասնակի գործարկվել է 2018թ.մայիսից և ներկա պահին այն իր մեջ ներառում է հետևյալ ենթահամակարգերը և տվյալների փոխանակման մոդուլները՝ . Անձնագրային մոդուլ . ՀՀ վերադարձի վկայականի տրամադրման մոդուլ . ՔԿԱԳ մոդուլ . Դատվածության և հետախուզման առկայության մասին տվյալների փոխանակման մոդուլ . ՀՀ քաղաքացիության մասին տվյալների փոխանակման մոդուլ . ՀՀ քաղաքացիություն ստանալու կամ քաղաքացիությունը դադարեցնելու դիմումների ընթացքին հետևելու մոդուլ . Հյուպատոսական հաշվառման մոդուլ . Հաշվետվությունների մոդուլ . Էլեկտրոնային գրանցամատյանների մոդուլ 3. Աշխատանքների ընդհանուր նկարագրությունը 3.1. Անձնագրային մոդուլ	դրամ	14832000	1	Ք.Երևան, ՀՀ ԱԳՆ համակարգ	2022թ. դեկտեմբերի 20

		Հիմնական գործառույթներ՝ . ՀՀ քաղաքացիների հին նմուշի անձնագրային գործերի ձևակերպում, որի արդյունքում գործն էլեկտրոնային եղանակով ուղարկվում է ՀՀ ոստիկանության ԱՎՎ՝ տպագրության, . ՀՀ քաղաքացիների հին նմուշի անձնագրերի օտարերկրյա պետություններում վավերականության ժամկետի երկարաձգում, . Կատարված գործերի մասին հաշվետվությունների ստացման հնարավորություն: 3.2.ՀՀ վերադարձի վկայականի տրամադրման մոդուլ Հիմնական գործառույթներ՝ . ՀՀ քաղաքացիների տվյալների փնտրում ԲՊՌ-ում, . ՀՀ քաղաքացիներին տրամադրված անձնագրերի հիմքերի (անձնագրային քարտ) առցանց հարցում ՀՀ ոստիկանության ԱՎՎ-ից, . ՀՀ վերադարձի վկայականի ձևակերպում՝ PDF ձևաչափով, տպելուն հարմարեցված ֆայլի ավտոմատ գեներացման հնարավորությամբ, . ՀՀ վերադարձի վկայականի իսկությունը www.e-verify.am համակարգով ստուգելու համար նախատեսված հատուկ համարանիշի զետեղում, . Կատարված գործերի մասին հաշվետվությունների ստացման հնարավորություն: 3.3ՔԿԱԳ մոդուլ Հիմնական գործառույթներ՝ . Ծննդյան, անվանափոխության, ամուսնալուծության, ամուսնության, հայրության ճանաչման, մահվան ակտային գրանցումների մասին օրենքով նախատեսված տեղեկությունների ստուգում և գրանցում, . Ընտանեկան կարգավիճակի մասին տեղեկանքների ձևակերպում, . Կատարված գործերի մասին հաշվետվությունների ստացման հնարավորություն: 3.4. Դատվածության և հետախուզման առկայության մասին տվյալների փոխանակման մոդուլ Հիմնական գործառույթներ՝ . ՀՀ ոստիկանության Ինֆորմացիոն կենտրոն ուղարկվող առցանց հարցումների միջոցով ՀՀ-ում դատվածության և հետախուզման առկայության մասին բազմալեզու տեղեկանքների ձևակերպում՝ . PDF ձևաչափով, տպելուն հարմարեցված ֆայլի ավտոմատ գեներացման հնարավորություն, . Ավտոմատ գեներացվող PDF ֆայլի վրա www.e-verify.am համակարգով ստուգելու համար նախատեսված հատուկ համարանիշի և/կամ QR կոդի զետեղում: Համարանիշի և/կամ QR կոդը մուտքագրելու դեպքում www.e-verify.am համակարգում արտացոլվում է տեղեկանքի բովանդակության էլեկտրոնային տարբերակը, որն ունի տպելուն հարմարեցված տեսք և համապատասխան կոճակ, ինչպես նաև ունի սարքի ճանաչման և ցուցադրման հարմարեցվող ֆունկցիա (Adaptive), . E-payments համակարգով, այլ վճարահաշվարկային տերմինալներով կատարված պետական տուրքի վճարումների ճանաչում ըստ ՀԾՀ համարանիշի կամ մուտքագրված գործարքի նույնականացման համարի, . Կատարված գործերի մասին հաշվետվությունների ստացման հնարավորություն:					

		3.5 ՀՀ քաղաքացիության մասին տվյալների փոխանակման մոդուլ Հիմնական գործառույթներ՝ . ՀՀ ոստիկանության ԱՎՎ (ԲՊՌ) ուղարկվող առցանց հարցումների միջոցով ՀՀ քաղաքացի հանդիսանալու վերաբերյալ տեղեկանքների ձևակերպում, . Հարցման արդյունքում ԲՊՌ համակարգից ստացվում է պատասխան՝ ա) ստացել է ՀՀ քաղաքացու անձնագիր՝ քաղաքացի է, բ) տվյալներ չկան՝ քաղաքացի չէ (ձևակերպումը կարող է փոփոխվել), գ) դադարեցվել է ՀՀ քաղաքացիությունը՝ նշելով իրավական ակտի համարը, . PDF ձևաչափով, տպելուն հարմարեցված ֆայլի ավտոմատ գեներացման հնարավորություն, . Ավտոմատ գեներացվող PDF ֆայլի վրա www.e-verify.am համակարգով ստուգելու համար նախատեսված հատուկ համարանիշի և/կամ QR կոդի զետեղում: Համարանիշի և/կամ QR կոդը մուտքագրելու դեպքում www.e-verify.am համակարգում արտացոլվում է տեղեկանքի բովանդակության էլեկտրոնային տարբերակը, որն ունի տպելուն հարմարեցված տեսք և համապատասխան կոճակ, ինչպես նաև ունի սարքի ճանաչման և ցուցադրման հարմարեցվող ֆունկցիա (Adaptive), . Կատարված գործերի մասին հաշվետվությունների ստացման հնարավորություն: 3.6 ՀՀ քաղաքացիություն ստանալու կամ քաղաքացիությունը դադարեցնելու դիմումների ընթացքին հետևելու մոդուլ Հիմնական գործառույթներ՝ . Ենթահամակարգն ունի հանրային հասանելիություն, որի միջոցով հնարավոր է հետևել ՀՀ քաղաքացիություն ստանալու կամ քաղաքացիությունը դադարեցնելու դիմումների ընթացքին, . Ենթահամակարգն ինտեգրված է ՀՀ ոստիկանության ԱՎՎ տվյալների պահոցին, որի հիման վրա դիմումի համարը և ամսաթիվը մուտքագրելով արտացոլվում է դիմումի ընթացիկ կարգավիճակը: . Կատարված հարցումներ մասին հաշվետվությունների ստացման հնարավորություն: 3.7 Հյուպատոսական հաշվառման մոդուլ Հիմնական գործառույթներ՝ . Քաղաքացիների հյուպատոսական հաշվառում մինչև 183 օր ժամկետով, . Քաղաքացիների հյուպատոսական հաշվառում 183 օրից ավելի ժամկետով, . Հյուպատոսական հաշվառում հյուպատոսների կողմից, եթե քաղաքացին դիմումը ներկայացրել է թղթային տարբերակով ՀՀ դիվանագիտական ծառայության մարմին, . Հյուպատոսական հաշվառում առցանց՝ հանրային հասանելիությամբ, . 183 օրից ավելի ժամկետով հյուպատոսական հաշվառման կանգնելու դեպքում ԲՊՌ-ում փոխվում է նաև քաղաքացու հաշվառման հասցեն և ամրագրվում է հայտարարագրված արտասահմանյան հասցեն, . Զինապարտ քաղաքացիների դեպքում, նախքան ԲՊՌ-ում հաշվառման հասցեի փոփոխությունը, փոխվում է նաև զինհաշվառման հասցեն: Զինհաշվառման դեպքում համակարգը ավտոմատ գեներացնում է տեղեկանք, որտեղ նշվում է կատարողի անունը, ազգանունը, պաշտոնը, օգտատիրոջ					

		անունը, կատարման ամսաթիվը: . Կատարված գործերի մասին հաշվետվությունների ստացման հնարավորություն: 3.8 Հաշվետվությունների մոդուլ Հիմնական գործառույթներ՝ . Տարբեր բովանդակությամբ հաշվետվություններ ձևավորելու հնարավորություն, . Ֆիլտրերի կիրառման, ժամանակահատվածների ընտրության հնարավորություն, . Հաշվետվությունների ձևավորում Excel ձևաչափով: 3.9 Էլեկտրոնային գրանցամատյանների մոդուլ Հիմնական գործառույթներ՝ . Տարբեր բովանդակությամբ էլեկտրոնային գրանցամատյանների ձևեր (template) ստեղծելու հնարավորություն (ադմինիստրատորի կողմից), . Տարբեր բովանդակությամբ էլեկտրոնային գրանցամատյաններ վարելու հնարավորություն (օգտագործողների կողմից), . Էլեկտրոնային գրանցամատյաններում ֆիլտրեր կիրառելու, ժամանակահատվածներ ընտրելու հնարավորություն, . Էլեկտրոնային գրանցամատյանները Excel ձևաչափով արտահանելու հնարավորություն: 4. Տեխնիկական սպասարկման նկարագրությունը Վերոնշյալ համակարգերի և ռեգիստրների ծրագրային և տեխնիկական սպասարկումը ներառում են հետեւյալ աշխատանքները՝ 1. Շահագործման ընթացքում առաջացող տեխնիկական և ծրագրային խնդիրների շտկում, որոնք առաջացել են որպես հետևանք ծրագրային ապահովման կամ մարդկային սխալի: 2. ՀՀ օրենսդրության և այլ ընթացակարգերի փոփոխման արդյունքում առաջացող անհրաժեշտ ծրագրային փոփոխությունների ներդնում: 3. Էլեկտրոնային համակարգի անխափան աշխատանքի համար անհրաժեշտ ծրագրային փաթեթների թարմացումների տեղադրում: 4. Այլ մարմինների հետ տվյալների փոխանակման և ներկայացման ընթացքում առաջացող խնդիրների լուծման աջակցություն: 5. ԲՊՌ և ՔԿԱԳ կողմից տրամադրվող ձևաչափերի համաձայն համակարգից հաշվետվությունների պատրաստում: 6. ԲՊՌ և ՔԿԱԳ կողմից տրամադրված տվյալների սահմաններում համակարգի տվյալների շտեմարաններում փոփոխությունների և (կամ) լրացումների իրականացնում: 7. Համակարգում առկա էլեկտրոնային ծառայությունների անխափան աշխատանքի ապահովում, անհրաժեշտության դեպքում էլեկտրոնային ծառայությունների ձևափոխում և լրացում: 8. ԲՊՌ և ՔԿԱԳ կողմից պահանջով համակարգում կատարված գործողությունների վերծանումների տրամադրում: 9. ԲՊՌ և ՔԿԱԳ կողմից համապատասխան ստորաբաժանման ներկայացմամբ բոլոր խնդիրների արձանագրում և տեխնիկական նկարագրության պատրաստում, համակարգերի նոր տարբերակների ստեղծման աշխատանքներում ներգրավվելու նպատակով: 10. Հեռախոսային կենտրոն, առնվազն երկու միաժամանակյա մուտքով, որի աշխատանքային					

		ժամերն են՝ ՀՀ օրենսդրությամբ աշխատանքային համարվող օրերին, ժամը 07:00-24:00 (GMT+4): Տեխնիկական սպասարկումը կարող է իրականացվել Հայաստանյան ֆիքսված և բջջային հեռախոսահամարների, ինչպես նաև Android և iOS հավելվածների միջոցով (Skype, Viber, Whatsapp և այլն):					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ արտաքին գործերի նախարարություն
Երևան Վ.Սարգսյան 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ900011018414
ՀՎՀՀ 02527728
Գլխավոր քարտուղար
Բ. Սահակյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Վի Իքս Սոֆթ» ՍՊԸ
ք. Երևան, Բաղրամյան 24/6
« Ամերիաբանկ » ՓԲԸ
Հ/Հ 1570020836060100
ՀՎՀՀ 02617951
Գործադիր տնօրեն
Վ.Մխիթարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«12» հունվար 2022թ.կնքված
ԱԳՆ-ԻԿԾՁԲ-12/01 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72261100/3	Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի սպասարկման ծառայություններ	1236000	2472000	3708000	4944000	6180000	7416000	8652000	9888000	11124000	1236000	13596000	14832000	**14832000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ արտաքին գործերի նախարարություն
Երևան Վ.Սարգսյան 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ900011018414
ՀՎՀՀ 02527728
Գլխավոր քարտուղար
Բ. Սահակյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Վի Իքս Սոֆթ» ՍՊԸ
ք. Երևան, Բաղրամյան 24/6
« Ամերիաբանկ » ՓԲԸ
Հ/Հ 1570020836060100
ՀՎՀՀ 02617951
Գործադիր տնօրեն
Վ.Մխիթարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն